ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 09 -Ա «21» 01 2021թ.

ք.Երևան

ԲԵԼԼԱ ԳԵՂԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-25.1-Ղ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետով և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բելլա Գեղամի Հակոբյանին 2021 թվականի հունվարի 22-ից նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետի (ծածկագիրը՝ 22-3-25.1-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնում՝ տասներկու ամիս փորձաշրջանով:
2. Ամսական աշխատավարձը 310 850 (երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
3. Բելլա Հակոբյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության պետ (ծածկագիր՝ 22-3-26.1-Ղ3-1) Մելանյա Ղուշչյանին:

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ